Կազմված է «05» փետրվարի 2026թ.
Բաղկացած է 8 էջից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՄԵՏԱԼ ԳՌՈՒՊ»
սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության
միակ մասնակցի 05.02.2026թ.-ի թիվ
5/2/26 որոշմամբ

Ընկերության տնօրեն՝
Ռաֆայել Հակոբջանյան

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից
29.09.2015թ.-ին
գրանցման համարը՝ 290.110.873405
ՀՎՀՀ՝ 01268239
18.09.2023թ.-ին գրանցված կանոնադրության թիվ
_____ ___ փոփոխությունը գրանցված է ՀՀ
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կողմից
23. 02. 2026թ.-ին

_____

«ՄԵՏԱԼ ԳՌՈՒՊ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ
2026

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՄԵՏԱԼ ԳՌՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ **Ընկերություն**) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:

1.2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսդրությամբ, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթներով, այլ կիրառելի իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ՄԵՏԱԼ ԳՌՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

կրճատ՝ «ՄԵՏԱԼ ԳՌՈՒՊ» ՍՊԸ

ռուսերեն լրիվ՝ «МЕТАЛЛ ГРУПП» Общество с Ограничеенной Ответственностью

կրճատ՝ «МЕТАЛЛ ГРУПП» ООО

անգլերեն լրիվ՝ «METAL GROUP» LIMITED LIABILITY COMPANY

կրճատ՝ «METAL GROUP» LLC

1.5. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0086, Շենգավիթ, Արտաշիսյան պողոտա 94/10:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա որպես այդպիսին գրանցվելու պահից:

2.2. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը փոխանցելը.

2.2.1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն: Եթե Ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասամբ, ապա Ընկերությունն ունի այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:

2.2.2. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում մասնակցի պահանջով Ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ մասնակիցների կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել բաժնեմասի չբաշխված մասի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

2.2.3. Նախապատվության իրավունքի (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

2.3. Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնեմասը դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից փոխանցվում է ընկերությանը:

2.4. Ընկերության մասնակիցները կարող են տեղեկություններ ստանալ, ընկերության գործունեության մասին գաղտնի փաստաթղթերից բացի, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ:
2.5. Ընկերության մասնակիցները պարտավոր են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ Ընկերության կանոնադրական կապիտալում:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 530,000,000 (հինգ հարյուր երեսուն միլիոն) ՀՀ դրամ, որը բաղկացած է 1 (մեկ) բաժնեմասից:
3.2. Ընկերության կանոնադրական կապիտալի 100% կազմող բաժնեմասը տեղաբաշխված է, ամբողջությամբ վճարված և պատկանում է Ռաֆայել Նորիկի Հակոբջանյանին (անձնագիր՝ AV0477993, տրված՝ 13.10.2022թ.-ին 008-ի կողմից, ՀԾՀ՝ 2401910417):
3.3. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. **Ընկերության կառավարման մարմիններն են.**
- Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը,
- Ընկերության խորհուրդը,
- Ընկերության միանձնյա գործադիր մարմնի ղեկավարը:

4.2. **Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն** ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
4.3. Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:
4.4. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնեմասերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:
4.5. Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն տվող միջոցներով փոխանակելու եղանակով:
4.6. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝
- Ընկերության բաժնեմասերի սեփականատեր հանդիսացող մասնակիցները՝ իրենց պատկանող բաժնեմասերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով,
- Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը,
- Ընկերության խորհրդի անդամները,

- Ընկերության ներքին աուդիտի անդամները,
- Անհրաժեշտության դեպքում հրավիրված այլ անձինք:

4.7. Ժողովի իրավասություններն են՝

1) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

2) Ընկերության խորհրդի ձևավորումը, խորհրդի անդամների նշանակումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

3) Ընկերության վերակազմակերպումը.

4) Ընկերության լուծարումը.

5) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

6) բաժնեմասերի անվանական արժեքի փոքրացման, բաժնեմասերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնեմասերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված բաժնեմասերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

7) բաժնեմասերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնեմասերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

8) Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

9) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը.

10) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

11) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

12) ժողովի վարման կարգի հաստատումը.

13) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

14) խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.

15) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

16) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

4.8. **Ընկերության խորհուրդը** ստանձնում է Ընկերության ձեռնարկատիրական գործունեության առաջնորդումը, ռազմավարական և արդյունավետ կորպորատիվ կառավարումը:

4.9. Խորհուրդը պատասխանատու է Ընկերության ռազմավարական և ընդհանուր գործունեության վերահսկողության համար: Խորհուրդը նաև խորհրդատվություն է

մատուցում գործադիր մարմնին: Իրենց պարտականություններն իրականացնելիս խորհրդի անդամները պետք է առաջնորդվեն Ընկերության, Ընկերության մասնակիցների և ներդրողների շահերով:

4.10. Ընկերության խորհրդի բացառիկ լիազորություններն են՝

1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների, ներառյալ՝ կորպորատիվ քաղաքականությունների որոշումը, ռազմավարական և տարեկան գործարար ծրագրերի ու դրանց կատարողականների հաստատումը.

2) Ընկերության տարեկան հաշվետվությունների ներկայացումը Ժողովի հաստատմանը.

3) Ընկերության կառավարման պրակտիկայի, գործունեության արդյունավետության գնահատումը և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների առաջարկումը.

4) ներքին հսկողության պատշաճ համակարգերի, մասնավորապես ռիսկերի, ֆինանսական և հաշվապահական հսկողության, իրավական համապատասխանության համակարգերի պատշաճ գործունեության ապահովումը.

5) Ընկերության կորպորատիվ կառավարման կանոնագրքի հաստատումը, կանոնագրքի կատարման և սկզբունքների պահպանման հսկողությունը.

6) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը.

7) մասնակիցների ժողովների օրակարգի հաստատումը.

8) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համապատասխան.

9) Ընկերության ներքին աուդիտի՝ վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

10) Ընկերության վերստուգողի (ներքին աուդիտորի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների հաստատումը.

11) Ընկերության ներքին աուդիտի տարեկան ծրագրի հաստատումը.

12) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատմանը վերաբերող առաջարկությունների ներկայացումը ժողովին և նրա վճարման չափի սահմանումը.

13) Ընկերության բաժնեմասերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

14) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին այն փաստաթղթերի հաստատումը, որոնք վերապահված չեն մասնակիցների ժողովի կամ գործադիր մարմնի իրավասությանը.

15) «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

4.11. Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև հեռակա կարգով:

4.12. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

4.13. Խորհրդի անդամները պետք է ունենան իրենց պաշտոնին համապատասխան որակավորում, հստակ ըմբռնեն իրենց դերը կորպորատիվ կառավարման համակարգում, ինչպես նաև ունակ լինեն ընդունել ողջամիտ որոշումներ Ընկերության գործունեության վերաբերյալ: Խորհրդի անդամի թեկնածուները պետք է բավարարեն Ընկերության ներքին իրավական ակտերով խորհրդի անդամի համար սահմանված չափանիշներին:

4.14. Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները իրենց կազմից: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.15. Խորհրդի ցանկացած անդամ կարող է հրաժարվել իր պաշտոնից՝ այդ մասին առնվազն 1 (մեկ) ամիս առաջ գրավոր տեղեկացնելով խորհրդի նախագահին: Լիազորությունները վաղաժամկետ դադարեցրած խորհրդի անդամի փոխարեն ընտրված խորհրդի նոր անդամի պաշտոնավորման ժամկետը սահմանվում է որպես նրա իրավահաջորդի պաշտոնավարման մնացած ժամկետ:

4.16. Խորհրդի անդամներն ընտրվում են մեկ տարի ժամկետով:

4.17. Ընկերությունում Խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում՝ Խորհրդի լիազորություններն իրականացնում են Ընկերության Ժողովը և գործադիր մարմնի ղեկավարը համաձայն՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի:

4.18. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է **Ընկերության տնօրենը**, ով գործում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր իրավասությունների շրջանակներում:

4.19. Ընկերության տնօրենը հաշվետու է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին և խորհրդին:

4.20. Ընկերության տնօրենը՝

1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

2) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

3) գործում է առանց լիազորագրի.

4) տալիս է լիազորագրեր.

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

6) ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

7) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

9) Ընկերության աշխատակիցների դրամական և ոչ դրամական խրախուսումների սահմանումը.

10) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

4.21. Ընկերության տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձը իրավասու է իրականացնելու Ընկերության գործող տնօրենի բոլոր լիազորությունները:

4.22. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու նպատակով Ընկերության Խորհուրդը ձևավորում է Ընկերության վերստուգիչ հանձնաժողով կամ նշանակում է միանձնյա վերստուգողի (ներքին աուդիտ)։
4.23. Ներքին աուդիտը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարումը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը։
4.24. Ներքին աուդիտը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ կամ Լիազորված մարմնի պահանջով։
4.25. Ներքին աուդիտը ընտրվում է երեք տարի ժամկետով։
4.26. Ներքին աուդիտի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը, բացատրությունները։
4.27. Ներքին աուդիտորը անկախ է գործադիր մարմնից։ Ներքին աուդիտը հաշվետու է խորհրդին:
4.28. Ներքին աուդիտի անդամները չեն կարող լինել կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի անդամներ ու դրանց հետ փոխկապակցված անձինք:
4.29. Ներքին աուդիտը՝
1) դիտարկում և գնահատում է կորպորատիվ քաղաքականությունների, գործընթացների, դրանց փաստաթղթավորման և հսկողական գործառույթների կիրառման համարժեքությունը և արդյունավետությունը,
2) պարբերաբար գնահատում է ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման գործառույթների արդյունավետությունը և ռիսկերին դրանց համարժեքությունը,
3) գնահատում է կազմակերպության կառավարման տարբեր մակարդակներում որոշումների կայացման գործընթացները,
4) գնահատում է որոշումների կայացման գործընթացում օգտագործվող տեղեկատվության արժանահավատությունը,
5) ստուգում է ռիսկերի կառավարման արդյունավետությունը,
6) ստուգում է ֆինանսական հաշվետվություններում ակտիվների պատշաճ արտացոլումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ակտիվների ֆիզիկապես առկայությունը և ակտիվների պահպանման եղանակները, ինչպես նաև պարտավորությունների լիովին բացահայտված և պատճառաբանված լինելը,
7) ստուգում է աշխատողների և կազմակերպական միավորների կողմից կազմակերպության քաղաքականություններին և կարգերին (կանոնակարգերին, ընթացակարգերին, հրահանգներին, ուղեցույցներին) համապատասխան գործելը,
8) գնահատում է տեղեկատվական համակարգի անվտանգությունը,
9) հաշվետվություններ է ներկայացնում խորհրդին և գործադիր մարմնին՝ իրականացված ստուգումների և բացահայտված խախտումների ու անհամապատասխանությունների մասին,
10) ժամանակին և պատշաճ կարգով խորհրդին տեղեկատվություն է տրամադրում բոլոր այն հանգամանքների մասին, որոնք կարող են էապես բացասաբար ազդել նպատակներին հասնելու կազմակերպության կարողության վրա,
11) իրականացնում է Ընկերության ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:
4.30. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը կարող է ծառայությունների մատուցման ձևով պատվիրակվել նաև ներգրավված այլ անկախ անձի

(իրավաբանական կամ ֆիզիկական), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսական կամ այլ հսկողական ծառայություններ մատուցող անձանց կողմից՝ իրենց իրավասության սահմաններում։

4.31. Ընկերության կառավարման մարմիններն իրենց լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթներով, իսկ նշված օրենքով, ինչպես նաև Ընկերության կանոնադրությամբ չկարգավորված հարցերի դեպքում օրենքի անալոգիայով կիրառվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները, այնքանով, որքանով՝ դրանք չեն հակասում «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին և բխում են Ընկերության մասնակիցների շահերից։